



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՐԵՏԵՐՈՐԻ ՈՒԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ 28 ՓԵՏՐՎԱՐ 1878

ԹԻԻ 1086

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մոռոյ է թէ ընդհանուր կացութիւնն ծանր էրայ վտանգաւոր չերկիր մեղ. քանզի պատերազմող տէրութեանց՝ այսինքն Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ համաձայնութիւնն հաստատուն չտեսնուի, և ըստ վերջին լրոյց հաշտութեան քանակութիւնն յառաջ երթալու վերայ են լին—Ստէֆանօ մէջ և կըհաւաստեն թէ կատարեալ խաղաղութեան դաշնադրութիւնն 'ի իստ առաջ պիտի ստորագրուի :

Ի միւս կողմանէ կըտեսնեմք թէ Անգղիան ծանր պարագայից ստիպեալ, կըզգուշանայ իր շահերէն զՌուսիան : Հետեւեալ օրըստօրէ փոփոխութիւն վերայ է իւր զինուորական ցոյցը որ սպառնական կերպարան մի առնելով զԹուրքիան կըպատճառէր Ռուսիոյ կառավարութեան : Իսկ Ռուսիան՝ պատերազմողի և յաղթողի իրաւունքը 'ի ձեռին՝ չուզեր թոյլ տալ որ անէ ուրիշ տէրութիւն մի իւր հաշտարար գործը խառնուի :

Ըստ երևմանց, Անգղիոյ կառավարութիւնն նկատողութեան առնելով զյիշեալ իրաւունքն հարկ համարեցաւ մեծապէս չափաւորել իր անվտանգութիւնն մի գոյանալով 'ի մէջ երկու նախանձորդ (rival) մեծ տէրութեանց, անգղիական նաւատորմիդ՝ որ 'ի Կ. Պօլս մտած 'ի հարկադրեցաւ հեռանալ անտի և երթալ արևմտի արկանի 'ի ծովածոցն՝ իզմիտի, ուր կը տեսնուի այժմ : Հետեւեալ օրուաց զօրաբան ևս առայժմ պիտի չմտնէ 'ի Կ. Պօլս : Բայց այսման Ռուսիան և Անգղիան փոխադարձաբար յանձնառու եղեն չգրաւել զկէլիպօլսն և զՊոլսը՝ որ Դարդանէլի նեղուցին ասիական լիւրքն կըգտնուի :

Կան քաղաքագէտ ոչ սակաւ անձինք, որք ինքեան գործոց կարգադրութեան առթիւ

կերկնին յերոպական շփոթութենէ մի : Թէև այս քաղաքական շփոթութիւնն անկարելի բան չէ, սակայն մեք յուսամք թէ ամենայն ինչ բանեկամարար պիտի կարգադրի 'ի մէջ եւրոպական տէրութեանց, և զիջումներ պիտի լինին Ռուսիոյ պահանջմանցն թէ իրաւացի լինին և թէ ոչ իրաւացի : քանզի զօրաւոր գիմագրութիւն մի չտեսնուի Ռուսիոյ յաղթական զօրութեանը : Զօրութիւն, որ յայտնի կերպիւ պաշտպանեալ է 'ի կայսերական կառավարութեան Գեորգիանիոյ, և ուրիշ մի քանի տէրութեանց համակրութիւնն ևս կըվայելէ : Եւ այս բնական է : քանզի ըստ առածին՝ զօրաւորին հոնակիցքն բազումք են : և թէ՛ զօրաւորութիւնին փաստն միշտ լաւագոյնն է :

Այսու ամենայնիւ Ռուսիան հաւանութիւն կուտայ և կընդունի ըստ սկզբանց, զգումարումն դեռապանաժողովոյ միոյ՝ ուր խորհրդակցութեամբ պիտի որոշուին եւրոպական օգտից վերաբերեալ Արևելեան խնդիրքն :

Կըհաւաստեն թէ այս խորհրդակցութիւնն 'ի Պատրն—Պատրն պիտի լինի առաջիկայ Մարտ ամսոյն մէջ :

Յայտնի է թէ արտաքին գործոց պաշտօնեայ վսեմ Սերվէր փաշան հրաժարեցաւ, և կայսերական հրովարտեալ նորա յաջորդ կարգեցաւ վսեմ Սալֆէթ փաշան :

Այս հրաժարման՝ կամ հրաժարեցուցման պատճառը՝ Լոնտօնի «Տէլի Նիւս» օրագրոյն հրատարակած հեռագրական մի նամակն է : Նամակը զոր նայն թերթին թղթակիցն յուղարկած է նմա յԱրևմտաօրոյ, և իրբեւ ամբաստանական գիր մի ընդդէմ Անգղիոյ կառավարութեան՝ մեծ ու տխուր տպաւորութիւն ըրաւ 'ի վերայ նախարարաց Անգղիոյ և անգղիացի ժողովրդեան, թէ և ըրտ Պինքնֆիլտ բարձրագոյնին մէջ առայժմ սուտ և անհիմն են նոյն նամակին պարունակութիւնքն :

Նաբօլէն վնասուելը, Թուրքիայի, Բարմայի և Մօտենայի դքսերուն տարագրուելը, և Վիքթոր—Էմանուէլը իտալիոյ թագաւոր հրատարակելով պատերազմաց վերջ տուող ճիւղիքի դաշնադրութիւնը, 1861ին 'ի Թուրքիոյ նիստը—նող ազգային ժողովը՝ Վիքթոր—Էմանուէլի թագաւորութիւնը վաւերացոյց : 1865ին Կեդրոնական կառավարութիւնը 'ի Ֆիորենցիա փոխադրեցաւ : 1867ին ալ գաղղիական զօրքերը Հռոմէն մեկնեցան : 1866ին իտալիոյ գահակալը Բուսիոյ հետ դաշնակցելով՝ Աւստրիոյ դէմ պատերազմ հրատարակեց : Աւստրիացիք 1866 Յունիս 24ին Գուսթօնայի մէջ իտալիոյ բանակին յաղթեցին, նոյնպէս նաև Յունիս 20ին ալ Լիսապոլի մէջ իտալացւոց նաւատորմիդը վնասուեցաւ : Սակայն Բիուսիացիք Աւստրիացւոց յաղթելուն վրայ Հոկտեմբեր 3ին Վէնայի մէջ խաղաղութեան դաշինքը կնքուեցաւ : Սոյն դաշնաց համեմատ վենետիկ քաղաքը իտալիոյ թողութիւն, Վիքթոր—Էմանուէլ 1866 տարւոյ Նոյեմբ. 7ին Վենետիկ մտաւ : Վիքթոր—Էմանուէլի զօրաց Հռոմ մտած ժամանակ պատահած դէպքերը, և կառավարութեան ֆիորենցայէ 'ի Հռոմ փոխադրուելը (1870) . նմանապէս կառավարութեան և Պիոս Իննեորդ Պապին ու կղերականաց մէջտեղ ծագած դժուարութիւնքն ևս հակառակութիւնները նոր բաներ են, և մինչև հիմայ դեռ քիչ չատ կըշարունակուէին :

Հոս տեղ չենք մուծար յիշատակելու թէ՛ վախճանեալ Վիքթոր—Էմանուէլը և Պապը իրարու վրայ մեծ համարումներ կըտածէին Վիք-

Ահաւասիկ այս նամակին՝ թարգմանութիւնն, որոյ 'ի վերայ հրաւիրեմք զձանր ուշադրութիւն ընթերցողաց մերոց :

Արևմտաօրոյն, 28 Յունվար 1878

Ի վայրկեանս տեսակցութիւն մի ունեցայ ընդ Սերվէր փաշայի (արտաքին գործոց պաշտօնեայ և իրազօր դեսպան Թուրքիոյ), որ հարցուց ինձ թէ «Տէլի Նիւս» օրագիրն բարեկամ է թէ հակառակ Թուրքաց, և առանց շփոթելոյ 'ի պատասխանէ իմէ թէ ընդդէմ էք : Թուրքաց, զգուշանալութիւն իւր յայտնեց վասն տեսանելոյն զնեկայացուցիչն այնպիսի գլխաւոր լրագրոյ միոյ : Միանգամայն յաւելցուց թէ իւր գոհունակութիւնն յոյժ մեծ է : քանզի կարեւոր մի պատգամ ունի յԱնգղիա փոխադրելու և թէ շնորհապարտ պիտի ընեմ զինքն եթէ հաջորդեմ զայն օրագրոյն իմոյ : Յետոյ ասաց ինձ :

Կրկնեցէք բառ առ բառ և որչափ ճշդութեամբ որ կրնաք թարգմանել՝ զոր ինչ պիտի ասեմ ձեզ, ես՝ Սերվէր փաշա, արտաքին գործոց պաշտօնեայ Թուրքիոյ : Մինչև յայսօր կուսակից էի Անգղիոյ, կուսակից անգղիական քաղաքականութեան և անգղիական դաշնակցութեան : Կարծէի թէ 'ի մէջ այս երկու ազգաց համակրութեան և փոխադարձ օգտից կապակցութիւնը կային, որք հարկաւոր կընէին դաշնակցութիւն մի 'ի մէջ նոցա : Այնչափ հաւատարմութիւն ունէի 'ի վերայ Անգղիոյ՝ որ ինքզինքս և զկառավարութիւնս 'ի վտանգի դրի : Բայց այժմ տեսանեմ թէ սխալեալեմ, թէ խաբած են զիս (և ինքզինքն դարձ) լաւ ևս է տեսել թէ ես խաբուած եմ : Իսկ այժմ հրաժարեմ յանգղիական դաշնակցութենէ : քանզի յետ այսորիկ չեմ կրնար հաւատարմութիւն ունենալ 'ի վերայ անգղիական քաղաքականութեան 'ի վերայ անգղիական կառավարութեան և անգղիացի ժողովրդեան : Ուստի կընդունիմ զքաղաքականութիւն և զդաշնակցութիւն Ռու-

Թոր—Էմանուէլ 1842ին Աւստրիոյ արշիդքսուհեաց միոյն՝ Ատելայիտի հետ ամուսնանալով՝ 1855ին սոյն արշիդքսուհեոյն մեղնելովը ատեն մը այրի մնաց : Բայց յետոյ մեռանց հանդիսի ու փառքի միջակ ընտանիքի մը ազկան հետ ամուսնացաւ, որմէ քանի մը զաւակներ ալ ունեցաւ : Իտալիոյ արքունական ընտանիքը և անդրանիկ և մեծ զաւակէն (այս անգամ իր հօրը մահուան վրայ իտալիոյ թագաւոր հրատարակուած Հիւմպերթ իշխանը), Սպանիոյ նախկին թագաւոր Ամեոն իշխանն (1845ին մնած է), Գլօթիլտ իշխանուհիէն (1843ին մնած և 1859ին իշխան Նորբոլէօն Պոնապարթի հետ ամուսնացած է), և Մարիա Բիատէն իշխանուհիէն (1846ին մնած և 1867ին Բորթուկայի այժմեան թագաւորին հետ ամուսնացած է), կըբաղկանայ : Վիքթոր—Էմանուէլ թագաւորը՝ որսորդութեան մէջ շատ ճարպիկ էր, թէև այնչափ գիտնական մը չէր, բայց շատ բարի թագաւոր մ'էր : Հիմակուան իտալիոյ գահակալը՝ իշխան Հիւմպերթ 1844, Մայիս ամսոյ 14ին մնած ըլլալով, այսօր 34 տարեկան է : 1863ին իւր հօրեղբօր դստեր Մարկըրիթ իշխանուհեոյն հետ ամուսնացաւ : Հիւմպերթ Ա. թագաւորը ամուսնուն հետ յարգանք կըվարուէր : Մենակեցութիւնը սիրելուն համար մինչև այսօր ինքզինքը ժողովրդեան սիրել տուած չէր : Ընդհակառակն Մարկըրիթ իշխանուհին ժողովրդեան սէրը ու համակրութիւնը իր վրայ գրաւած է :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԻՔՏՈՐ—ԷՄՄԱՆՈՒԷԼ

(Թարգմանեալ 'ի Գաղղիարէն բնագրէ :)

Ողոտափառ հանգուցեալը 1820 Մարտ ամ. 14ին ծնած ըլլալով այսօր 58 տարեկան հաւին մէջ կըգտնուէր : Ի մանկութենէ զինքն արական ծառայութեան մէջ աշխատելով, սոյն պարէզին մէջ զգալի յառաջգիմութիւն ըրաւ, և Նաւարայի պատերազմին մէջ դիւցազնարար կուեցաւ : Այս պատերազմին գիշերը հայրը գահէն հրաժարելով՝ ինքը անոր տեղը տեսնելով թագաւոր անուանեցաւ : 1855ին Ռուսիոյ դէմ բացուած պատերազմին զինակալ համար, Գաղղիոյ և Անգղիոյ հետ դաշնակցելով 17.000 հոգիէ բաղկացեալ բանակ մը իւր յաղթարկեց զօրավար Լամարմօրայի հրամանատարութեան ներքեւ : Յիշեալ զօրավարը ինչայսի եղերաց վրայ եղած պատերազմին զոյց տուած քաջութեամբը մեծ անուն ստաւ : Իր գահակալութեան միջոցին մէջ պատառնակ զլիսաւոր դէպքերն են, 1855ին 'ի Գաղղիա ըրած ճանապարհորդութիւնը, և Գաղղիոյ գահաճեցութեամբ կազմած պետական վարչութիւնը : 1868 թուականին տեղի ունեցած Մոնթենիպի և Սոլիէրինոյի պատերազմներն վերջը՝ Աւստրիացւոց Լոմպարտիայէն արտաքուելը, Ֆրանսուա թագաւորին՝ Կարլոսի և կամաւորաց օժանդակութեամբ

սիրոյ . և աւելի կուսակից եմ Ռուսաց քան նոյն իսկ Ռուսք : Կաղաչեմ հաղորդեցէք զայս :

Յընթացս խօսակցութեան մերոյ , Սէրվէր փաշան կրկնեց ինձ զոր ինչ արդէն զրուցած էր՝ աւելի կենդանի գոյներով , մանաւանդ պնդելով ի վերայ եղելութեան թէ խաբած են զինքն : « Բաշալերուեցանք , ի սխալման հրապուրեցանք , խաբուեցանք » , զրուցեց , Դարէն պէյն՝ որ ներկայ էր այս խօսակցութեան , յաւելցուց , այո՛ խաբուելն՝ ճիշտ բառն է : Յետոյ Սէրվէր փաշան շարունակելով ասաց , « Եւ ի ձեռս իմ ունիմայնպիսի պաշտօնական գրուածներ՝ որոց օգնութեամբ կրնամ ապացուցանել զրուցածս , և պիտի ապացուցանեմ » : Քիչ մը ետքը՝ մեկնելոյ թոյլտուութիւն լինդրեցի և հեռացայ : Ահա ասոնք են Սէրվէր փաշային զրուցածներն , զոր յառաջ կրթերեմ ամենայն ճշդութեամբ որչափ որ յիշողութիւնս թոյլ կուտայ ինձ :

Տեսակցութիւն մի՛ ևս ունեցայ թուրքիոյ պատգամաւորութեան երկուց անդամոց հետ , որոց անուանքը չիշխելու համար աղաչեցին զիս : Մին ի սոցանէ զբոլոր պատասխանատուութիւն այժմեան պատերազմին՝ Սոլապիւրի լորտին վերայ ձգեց : Միւսն վերահաստատեց զոր ինչ զրուցած էր ինձ Սէրվէր փաշան , և աւելի որոշ կերպիւ բացատրեց միանգամայն իշխանութիւն տուաւ ինձ հաղորդել ձեզ զորինչ զրուցեց ինձ , բայց առանց զանուն նորա յայտնելոյ :

Ահաւասիկ նորա ասածներն .

Բաշալերուեցանք յԱնգղիոյ պատերազմ բաշալ ընդդէմ Ռուսիոյ , և մանաւանդ շարունակել զայն երբ մեր բանաւորութիւնն կիմացներ մեզ թէ լաւագոյն է հաշտութեան ձեռք զարնել որեւիցէ պայմանաւ . նախքան զանկումն Բլէյքայի , եթէ Անգղիոյ կառավարութեան խրատուց ակնյ՛ չկախէինք , հաշտութիւն մի կնքած պիտի լինէինք , որ գոհ պիտի ընէր ըզՌուսիան : Չեմուղեր յիշեալստ զպաշտօնական գրուածս Տէրպի լորտին , որք յայտնի և որոշիչ էին . եթէ նոյն գրուածոց հաւատ ընծայէինք , որեւէ օգնութիւն պիտի չսպասէինք յԱնգղիոյ . բայց պաշտօնական գրուածքն չեն որոց վերայ աւելի վտահոթութիւն ունին դիւանագէտ անձինք , այլ բարեկամական ծանուցագիրերն են

և այն խօսքն զորս ականջին կըզրուցեն : Այո՛ , Պիքսթոֆիլտ կոմսին՝ Մուսիւրիս փաշային հետ ունեցած մասնաւոր խօսակցութիւնքն , կամ միտոր Լէյէրտին՝ Սէրվէր փաշային հետ և Սուլթանին հետ ունեցած տեսակցութիւնքն են որ առաջնորդեցին և խաբեցին զմեզ : Այս բանին ականորկութիւն կընէր վսեմ Սէրվէր փաշան , երբ ասաց ձեզ թէ խաբուեցաւ : Կրնամ նաեւ հաւատել ձեզ թէ երեք շաբաթէն աւելի չկայ , որ միտոր Լէյէրտ կապահովցնէր զմեզ տակաւին թէ Անգղիան յօգնութիւն մեր պիտի գար , թէ պարտիմ շարունակել զպատերազմ և թէ ամենայն ինչ յաջողութեամբ պիտի լինէր : Իշխանութիւն կուտամ ձեզ կրկնել և ծանուցանել զոր ինչ պիտի յաւելում այժմ : Միտոր Լէյէրտ՝ Անգղիոյ դեսպանն՝ ասաց ինձ , « Երկարժէք թէ առանց նպատակի՝ յաղարկեցին զիս աստ , զիս՝ որ բարեկամ եմ թուրքիոյ » : Չէ՛ք հասկնար որ զձեզ քաջաբերելոյ և զՌուսիան վշտացնելոյ նպատակաւ է : Հաւատացէ՛ք յիս , քաջաբերացարուք , մի կնքէք հաշտութիւն , և մարտնչեցէ՛ք մինչև ցվերջն : Միտոր Լէյէրտ խիստ յայտնի կերպիւ կըխօսէր : Իւր զրուցած խօսքերն ծանուցեալ են ի բոլոր դեսպանաց Կ. Պոլսոյ . քանզի դադարէ չէր պահեր , նա մանաւանդ ինքզինքն անգղոյշ կըցուցնէր այնչափ բացայայտ կերպիւ զմեզ քաջաբերելով : Յօժարմիտ պիտի զրուցեմ ձեզ թէ միտոր Լէյէրտ ոչ է այն մարդն՝ զոր պարտ էին ընտրել վասն դժուար պաշտօնին՝ զոր ի գործ պիտի դնէր այսպիսի խառնաշփոթ ժամանակի մը մէջ : Չայս միայն կրնամ յաւելուլ ի պաշտպանութիւն իւր՝ թէ ինքն ևս պարկեշտութեամբ խաբուեցաւ , և խաբեց զմեզ ևս առաւել դիւրութեամբ՝ որ ինքն ևս աւելի կատարելապէս խաբուած էր : Մուսիւրիս փաշան կրկնելույսցնէր զմանաւոր խօսակցութիւնն Պիքսթոֆիլտ կոմսին իբրեւ գրեթէ նոյնչափ զօրութեամբ . թէ և աւելի խոհեմութեամբ քան զմիտոր Լէյէրտ : Սէրվէր փաշային ձեռքն այնպիսի գրուածներ կըզտնուին՝ որք տարակոյտ չեն թողուր իմ ըսածներուս վերայ , և որք պիտի հրատարակուին զինի պատերազմին : Ահա այս է որ պատճառեց զկորուստ մեր և զկործանումն թուրքիոյ : Անշուշտ յոյժ տխուր են այս եղելութիւնքն :

Անգղիական Դատարարը , և Բոլոնիոյ Օրոնի պաշտօնը :

Այս վերնագրով ՎԱՔԸԹ Թուրք օրագիրն զհետեւեալ յօդուածն հրատարակած է , յորմէ ընթերցողք մեր արդէն տեղի ունեցած դիւանագիտական դիպաց վրայօք յետանկատ դադար մի կրնան ստանալ :

Երէկուան մեր Թուրք մէջ ծանուցինք ըզմուտն ի Կ. Պոլսի անգղիական նաւատորմին և զհասանելն Ռուսիոյ դեսպանատան առաջին թարգման մօսիւ Օնուին՝ յատուկ պաշտօնին :

Դարագրանէի ներուցէն վերոյիշեալ նաւատորմին անցանելն՝ ի գործ դրուած եղելութիւն մի լինելով , կարող եմք հրատարակել թէ 7—8 պատերազմական նաւք արդէն երկաթ ձգած են ի կղզին իշխանաց , և թէ ուրիշ մի քանի նաւք Կէլիպօլուի առջև կըգտնուին :

Ըստ երևութիւն անգղիական նաւատորմին դաշն ուրիշ նպատակ չունի բայց միայն պաշտպանել զանգղիական հպատակս . սակայն ստոյգն այն է թէ Անգղիան , որոյ աղագեցութիւնն ըսկաւ տկարանալ Եւրոպոյ մէջ , կամեցաւ այս գործոյն ձեռք զարնելով վերականգնել զանգղեցութիւն և զարժանաւորութիւն իւր իբրեւ մի մեծ տերութիւն :

Ետքէն ի ձեռս բերած մեր տեղեկութիւնն ներէն կիմանամք թէ մօսիւ Օնուին պաշտօնն ուրիշ բան չէր բայց միայն ծանուցանել Ռաբաթագոյն Դրան թէ՛ անգղիական նաւատորմին Կ. Պոլսոյ լուրերն հասած լինելով , Ռուսաց զօրագունք իւր ևս պիտի մտնեն ի մայրաքաղաքն Այսու ամենայնիւ , եթէ Բ. Դուռն իւր հաւանութիւնն չտայ նաւատորմին ներս մտնելուն և բողոքէ , Ռուսիան ևս իւր կողմանէ պիտի հրաժարի ի գործ դնելոյ մի քանի զգուշութեան միջոցներ : Բայց յայսմ դիպումս մօսիւ Օնուին պատուէր տուեալ էր ի կողմանէ Նիքոլա Մեծ—Դքսին խնդրել իբրեւ շնորհ մի , որպէսզի (օսմանեան) կայսերական կառավարութիւնն թոյլ տայ որ Ռուսաց զօրաբանակին մի մասն ընդունուի ի Կ. Պոլս . քանզի զօրբանակին կացութիւնն խիստ անհանգիստ է ի պատճառս ձիւներուն և անձրեաց՝ որք առատապէս կըտեղան :

Ի կայսերական պալատն գումարեալ խոր

զոր կըկատարեն կարգը տօնախմբելու համար , մէկը ձմեռուան և մէկը ամառան արեւագարձի (solstice) ժամանակ :

Մասնութեան ծագումը խիստ մթին է , Ռմանք Եգիպտոսի և Յունաստանի գաղտնիքներէն ծագած կըկարծեն . ոմանք երուսաղէմի մէջ Սողոմոնի տաճարին շինութեան ժամանակ , և ուսուցիչ կըճանչան շիրամը՝ որ սոյն տաճարը շինելու պաշտօն ունեցող ճարտարագետն էր . ոմանք ալ վերջապէս Գամբիէ կամ Բօլ—Գրուաներու գաղտնիքն կըկրուէին միասնորդ կըկարծեն , Ամենէ հաւանական կարծեաց համեմատ մասնական հիմնադրութիւնը իւր էութիւնը կըպարտաւորի համեղաբայութեան մը՝ որ որմնագիրներու խումբ մ'էր , և ութերորդ դարուն մէջ սկսաւ : Այս ճարտարագետները Եւրոպայի մէջ ծայրէն միւս ծայրը ճամբորդելով , միջին դարու Եւրոպայի այն սքանչելի և ընտիր շէնքերը և տաճարները հիմնած են՝ որք երևելի են թէ փառաւորութեան և թէ միաձեւութեան մասին , և Գրիպիս ըստած շէնքերու ցեղին կը վերաբերին : Նախ Լօմպարտիայի մէջ ցոյցցին ասոնք իրենց տաղանդը , անտի Կօլէ մէջ տարածութեալ , և անցան Գերմանիա Եւրոպանի ժամանակ , յետոյ Անգղիա անցան՝ ուր արդէն հզօր՝ մարմնաւորութիւն մը կըկազմէին 10երորդ դարուն , որոյ նախագահն էր Բրէնս Խովին՝ եղբայր Աթելսթէն Թագաւորի : Տասներեքերորդ դարուն Սթադպուրկի հոյակապ աթոռանիստ տաճարը շինեցին (1277) , ճարտարագետական շատ շինութիւններ յարատեւ կատարելու համար առանձնաշնորհութիւն ունէին , ընթացակցութեան խորշելու համար իրենց գաղտնի վարքը հաստատուն կըբռնէին և երկարատեւ համակութեան կամ աշակերտութեան մէջ կը թողնէին : Ժամանակ անցնելով , երբոր ճարտար

րապետական գործերնին հանրածանօթ եղաւ , մասնական ընկերութիւնը իւր նախնական յոտկոթիւնը կորսնցուց . ճարտարագետութիւն չգիտցող բազմաթիւ անձինք ալ ընդունուեցան իրեն ծոցը . շինութեան արհեստին գործիքներուն անունները և գործիքները միայն մնացին , այլ ուրիշ բան չ'եղէն՝ այլ իւր հանգանակ կամ սկզբունք : Ժողովները հաստատ մնացին , այլ սակայն նախնական բարեկարգութեան մասին՝ լոկ եղբայրական գաղափար պահեցին : Անգղիոյ մէջ միայն կըգտնուին մասնական կարգին ամենահին հետքերը՝ գրեթէ այսօրուանին նման բարեկարգեալ :

1327ին բոլոր լորտերը մասօն էին : 1503ին Հենրիկոս է ինքզինքը մասնական կարգին պաշտպան հռչակեց և իւր պալատին մէջ Ժողովարան (լօթ) մը շինեց : Մասնութիւնը 1725ին մտաւ Ֆրանսայի մէջ՝ լորտ Տէրութիւն—Վաթէնսի միջոցաւ , որով քիչ միջոցի մէջ հանրապետութեալ եղաւ : 1771ին մեծ վարպետին (grand maitre) էր Եւրոպ դուքսը (անկէ ի վեր Օրէնանի դուքս) և կայսրութեան ատեն Նաբոլէոնի եղբայր՝ Ժօզէֆ Նաբոլէոն մեծ վարպետ եղաւ :

Մասնական գումարումները կամ Ժողովները ամեն ժամանակ կառավարութեանց անվտանգ հոթեան տեղի տուած են , տեսնելով որ իրենց համաժողովները խիստ չուտով կըմիանան գաղտնի կերպով . իբրեւ կրօնից և տէրութեանց թշնամի կընկատէին զիրենք : 1425ին անգղիական խորհրդարանը աքսորեց զիրենք : 1561ին ալ էլիզապէթ Թագուհին աքսորեց , 1737ին Բարիլ Եւրոպէն ասոնց հակառակ վարուեցաւ . նմանապէս հալածանք կրեցին Սպանիոյ , Ռուսիոյ և Իտալիոյ մէջ : Քիչման ԺԲ. Պէնուս ԺԲ. Պիոս Է. և Լէոն ԺԲ. պապերէն դադապարտուեցան :

ՅԲԱՆ—ՄԱՍՈՆԻ

(Թարգմանեալ ի գաղղիարեհի)

Ֆրանմասօնք երկրիս զանազան կողմերը տարածուած , մանաւանդ Անգղիոյ , Գերմանիոյ և Գաղղիոյ մէջ տարածուած գաղտնի ընկերութիւն մը կըկազմեն : Այս ընկերութեան նպատակն է (քառ առաջին յօդուածոյ ընկերութեան կարգին) , բարեգործութիւն ընել , ընդհանուր բարոյականը ուսանել , և ամեն կերպ առաքինութիւն կատարել : Ֆրանմասօնք ինքզինքնին եղբայր կըճանչան , և պարտաւոր են իրարու օգնել , ուր որ ըլլան , ուր ազգին և ընկերականութեան , ուր կարգին կամ դատուն որ վերաբերին : Ընկերութեան մէջ չընդունուիր մէկը՝ մինչև որ վարդապետական արարողութիւններ չըկատարուին , կամ մինչև որ ընկեր եղողը բաւական չիորոշուի : Նորքնայք կ'երգնուն որպէսզի ընկերութեան սկզբան գաղտնիքը չըյայտնեն : Ասոնք զիրար ճանչնալու վերաբերեալ յատուկ նշաններ ունին : Քանի մը ձեւեր ունին որք գործաւորութեան կամ շինութեան արուեստէն փոխ առնուած են . զորօրինակ գոգնոցը , դեսպակը (թէճկէթէ) եռանկիւնը և կարկինը ֆոքրիկ Ժողովներու կամ խումբերու բաժնուած են և Ժողովարանաց մէջ կըհաւաքուին : Կարգին մէջ աւելի կամ նուազ յառաջադէմ եղողներն իրենց գրից համեմատ աստիճաններ կընդունին , որոց թիւը երեսուն երեքէն աւելի չէ : Սակայն երեք հիմնական աստիճան միայն ունին , այսինքն , Բերալար (apprenti) , Ըկի (compagnon) , Վարդ (maitre) : Կարգին մէջ բարձրաստիճան եղողները տեսակ միջոցով կըկազմեն որուն անունն է մեծ—Արեւել (Grand Orient) . Գաղղիոյ Մեծ—Արեւելին տեղին է Բալիլ : Ֆրանմասօնք տարին երկու ինչոյք ունին

Հորդոն որոշեալ հաւանութիւն տալ այս խնդրոյն . և այս պատճառաւ վսեմ Նամիք փաշան յորեքշաբթի երեկոյն յատուկ շոգեշարժ կառավարման մի մեկնեցաւ յԱզրիանուպոլիս երթալու 'ի հրաւիրել զՆիքոլայ Մեծ—Դուքսն որ Ռուսաց զօրաբաժին մի յուղարկէ 'ի Պոլիս . Պարտիմք կրկնել թէ Անգղիոյ նաւատորմը զին մուտն կայսերական կառավարութեան հաճութեամբ չեղև . Բարձրագոյն Դուռն բողոքեաց . Հետեւաբար 'ի մէջ Ռուսիոյ և Բ. Դրան դաշնադրեալ պայմանքն 'ի մասին զինադադարի և հաշտութեան հաստատուն մնան միշտ . Ուստի բնական է թէ 'եթէ Ռուսք մտանեն 'ի Պոլիս , իրրե բարեկամ և իրրե հիւր (միւսափր) պարտին մտանել :

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԻ

Նիքոլայ Մեծ—Դքսին ընդհանուր զօրաբանակն բարեկամաբար մտաւ և գրաւեց Այի—Ստէֆանո գիւղն , որ կը գտնուի յանմիջական յրկակայս Կ. Պոլսոյ Ժամանեան և Ռուսաց լիազօր պետանքն 'որք Ազրիանուպոլսոյ մէջ կը բանակուեան , վերագործան յ'Այի—Ստէֆանո , ուր բանակստութիւնքն կը շարունակեն , և հաշտութեան դաշնադրութիւնն (որ չհաշտութիւն Կ. Պոլսոյ պիտի կոչուի) հաւանականաբար այսօր ստորագրեալ պիտի լինի :

Նիքոլայ Մեծ—Դուքսն ևս , այսինքն Չարին եղբայրն , 'ի բանակակերպոն իւր Այի—Ստէֆանո եկաւ . ընկերութեամբ կուրքօ , Սքօպէլէֆ , ինքն ինքի զօրապետաց , Լէսիթէնպէրկի գլխին և ուրիշ գլխաւոր զինուորականաց :

Բարձրագոյն Դրան կողմանէ հրատարակեալ յայտարարութիւն մի կը բացատրէ Կ. Պոլսոյ բընակեաց զբարեկամական գալուստն Ռուսաց , որոյ պատճառ եղած է անգղիական նաւատորմին անցանելն 'ի նեղուցէն Դարդանէլի :

ժամանեան կայսերական կառավարութիւնն իւր հաւանութիւնն տուած է Ռուսիոյ թողուլ զհետեւեալ երկիրներն , Ասիոյ մէջ՝ զգաւառսն Պաթումի , Արասհանի , Կարսի և Պայադիտի . իսկ եւրոպիոյ մէջ՝ զբոլանդակ Տոպրուճան :

Գարատաղի իշխանութիւնն պիտի ընդունի Անթիպարի և Տուլչինօ քաղաքները . իսկ Սերպիոյ համար որոշուելի նոր սահմանքն տակաւին յայտնի չեն :

Ահաւասիկ կայսերական հրամանագիրն , զոր բարձրաւ Ահմէտ շէքիք փաշան ընթերցաւ Օսմանեան բարլամէնթին մէջ և որով առժամանակեայ կերպիւ լուծուեցաւ խորհրդանոցն :

«Որովհետեւ այժմեան կացութիւնն թոյլ չտար բարլամէնթին» որ զըջան իւր կատարէ ,

«Որովհետեւ ըստ սահմանադրութեան , 'ի թիւն արտոնութեանց յ'Եհպետին գտանի նաև իրաւունքն երկարաձգելոյ կամ կարճելոյ զըջանն երեսփոխանական խորհրդանոցին , եթէ պարագայը հարկաւորապէս կը պահանջեն ,

«Ուստի օգոստոս Սուլթանն կը հրամայէ որ երեսփոխանաց ժողովն և ծերակոյտն» որոց չըջանն ըստ սահմանադրութեան պարտ էր վերջանալ 'ի 1—13 Մարտի , այսօրուանէ սկսեալ դադարի , և կը պատուիրէ իւր առաջին նախարարին յայտնել կայսերական գոհունակութիւնն իւր յիշեալ երկուց խորհրդարանաց նախագահից և անգամոց վստն բարեմախանձ եռանդեան և ազգասիրութեան՝ զորս ցոյց տուին ընթացաւ չըջանի իւրեանց :

«Ն. յ'Եհպետութեան հրամանն արդէն 'ի գործ դրուած լինելով , Դուռն կը փութայ զայս եղբորութիւնն ծանուցանել հասարակութեան .

«2—14 Փետրվար , 1878 »

ԱԶ ՓԱՅԻՆ

Հետեւեալ բողոքագիրն , որ արդէն մատուցեալ է քաղաքիս ազգ. երեսփոխանական ժողովին , յուղարկեցաւ մեզ յուսումնական երեւելի բարեկամ միոյ՝ 'ի հրատարակութիւն Արշալուսոյ միջոցաւ :

Իզմիր , 21 Դեկտ. 1877

Մեծապետիւ Ե. Ետեյեան , ատենապետ Գաւառական ընդհ. ժողովոյ 'ի քաղաքիս :

Մեծապետիւ Տէր ,

Նկատելով որ պայտօնական յայտարարութե համեմատ քաղաքիս ազգային արկղը մէկ միլիոն շուրուշի չափ բաց պարտք ունի , և տարին 82, 000 շուրուշ սոկոս կը տայ ,

Նկատելով որ մօտեւոր ազգային տուրք մը պիտի հաստատուի մեր ազգային պիւտճէն կարգադրելու և իրաց այս վիճակին դարման մը տանելու համար ,

Նկատելով որ ազգային դպրոցները փոքրելու վրայ են , գասարան ու գրասեղան չունին և անոնցմէ դատ խել մը բարոյական ու նիւթական պէտքեր կան զորս ազգը ընցնելու անկարող կ'գտնուի ,

Կ'ինքեմք որ գաւառական ընդհանուր ժողովը վահանեան ժամերգական ընկերութեան սահմանուած տարեկան 13,200 շուրուշի գումարը , (որ հինգ տարիէ 'ի վեր տրուելով , ազգային պարտքին վրայ 66,000 շուրուշ աւելնալուն պատճառ եղած է) առայժմ չնշէ , կամ աւելի ստիպողական պէտքերու գործածէ . գումար մը որ ինքնին խիստ մեծ է , վստիկ մեր սրբազան Առաջնորդին անգամ 18,600 շուրուշ սահմանուած է տարեկան և զոր մեր ամենէն բանիւրուն դաստուն հազիւ հազ կ'ստանայ :

Տարակոյս չունինք , մեծա. Տէր , որ մեր այս անկեղծ խնդիրքն ու դիտողութիւնները գաւառական ընդհանուր ժողովոյ կողմէն այնքան աւելի լուրջ խորհրդածութեան պիտի առնուին՝ որքան որ իրաւունք չէ անշուշտ ազգային պիւտճէն կարգադրելու համար հասարակութեան զոհողութիւն պահանջել առանց հնարին եղած զոհողութիւններ կանխաւ ընելու :

(Մարտագրութիւն)

Ձմիւռնիս , 30 Յունւար 1878

Յարգւոյ խմբագիր Արշալոյս Արարատեան պատուական լրագրոյն :

Քաղաքիս Հայ Ընթերցատան հերոդէ չըջանի հաշուեկշիռն մէջ քանի մի սխալներ լինելուն կը փութամք ուղղելու :

Նախ ռէկերորդ չըջանէն արկղին մէջ աւելցած գումարը 932 շուրուշ 25 ստակ էր մինչդեռ այժմ 710 շուրուշ 25 ստակ ցուցուած է , սակայն պատճառն մինչև ռէկերորդ չըջանի Տնօրէն խորհրդոյ ընտրութեան , նախորդ գանձապետին ձեռամբ 322 շուրուշ ծախք եղած և նորընտիր գանձապետին միայն 710 շուրուշ 25 ստակ յանձնուած ըլլալն է , որ փոխանակ աւելցած գումարը 932 շուրուշ և 25 ստակ զնելով ծախքերն ալ հաշուեկշիռն ելից կողմէ մի առ մի ցուցուելուն , մոռացմամբ 710 շուրուշ 25 ստակ ըսուել է . նոյն ծախքերն են :

Ընթերցատան նախկին գործակաւոսարին Յունուարի ամսակաւոր

57

Լոյս հանդիսին չորրորդ չըջանի բաժանորդագիրը ցվեր 1877 Սեպտ. ամսոյ

80

Եօթերորդ չըջանի հաշուեցուցակին տպագրութեան համար և ուրիշ մանր

85

Շուրուշ 222

Երկրորդ՝ Ընթերցատան բաժանորդաց ցանկին մէջ սխալմամբ տիկին Յովհաննէս Զաքեան ըսուած է , փոխանակ տիկին Թադուհի Ս. Զաքեան ըսելու , որնոր Ընթերցատան մշտնջենաւոր բաժանորդ եղած է , ինչպէս ուրիշ ռէկերորդ չըջանի հաստատութեանց ևս , և քաղաքական ժողովոյ վաւերացմամբ կտակած է իր կենդանութեան ժամանակ ինքն անձամբ և իր մահունէն յետոյ իր երեք որդւոց ձեռամբ տարուէ տարի մէջմէկ Մէհմի վճարել Հայ Ընթերցատան Ուստի մշտնջենաւոր շնորհակալութիւն :

Երրորդ՝ նմանապէս բաժանորդաց ցանկին մէջ մեծա. Լազարօֆ Մեսրոպի անուն տեղ Պարժանքեան Մեսրոպ գրուած է :

Արդ այս սխալմունքներուն համար մեծարոյ բաժանորդաց ներողութիւնը կը խնդրեմք :

Այսու պատեհութեամբ հարկ կը համարեմք իմացնել որ նոր Տնօրէն խորհրդոյ ընտրութիւնը կատարուեցաւ , և կը յուսամք որ կը բարեհաճին իրենց ազգանուէր պայշտօնը ստանձնել . ներկայ 1878 տարւոյս մէջ Ձմիւռնիոյ Հայ Ընթերցատունը իր իններորդ չըջանը կ'ողջունէ , և սկիզբէն բարեգուշակ կը թուի մեզ . վստիկ

Ընթերցատան սրահին մէջ արդէն գտնուած ճոխ և բնորոյ լրագիրներու վրայ Անգղիացի շաբաթաթերթ մ'ալ աւելցաւ The Observer աւուն , զոր Լոնտօն բնակեալ մեր հայրենակիցներէն մեծա. Մ. Սիւքստեան նուիրած է , որուն համար մեր հոգաբարակական շնորհակալութիւնները մատուցանելով կը խնդրեմք որ իր սիրելի հայրենեաց մէջ գտնուած այսպիսի ազգօգուտ հաստատութեան մը վրայ իր նիւթական և բարոյական օգնութիւնները շարունակելու հաճի :

Ետեւոյ խմբագիր Տէր , մեր անկեղծ շնորհակալութիւնները կը խնդրեմք և ձեզ , որ Ընթերցատան վերաբերեալ ամեն յօդուած ձեր պատուական լրագրոյն մէջ ազգասիրաբար հիւրընկալելով , ինչպէս որ միշտ նոյնպէս և ռէկերորդ չըջանի Տնօրէն խորհրդոյ անդամոց երախտագիտութեանը վրայ իրաւունք ստացայք . ուստի խնդրելով որ մեր սոյն վերջին գրութեան ալ Արշալուսոյ մէջ տեղ մը շնորհելու հաճիք , միւսմք յարգանք : Հրաժարեալ Տնօրէն խորհուրդ ՀԱՅ ԸՆԹԵՐԾԱՏԱՆ

Սէլիմիյէի զօրանոցը հաստատեալ 23ի չափ Ռուս գերիներ որոց ամենքը բաց 'ի մէկէն , Ղարապաղցի Հայ են եղեր , իսկ միւսք Ռուս , երկու շաբաթ առաջ Գատը—գիւղի քարոյիչ Սրուանձտեանց գեր. Տ. Գարեգին Մ. վարդապետի այցելութիւնն ընդ ունելով հոգեւորապէս մխիթարուելէ և խոստովանուելէ վերջը , կիրակի օր ամենքն ալ Գատը—գիւղի Հայոց եկեղեցին երթալով հաղորդուել և յետ աւարտման եկեղեցւոյ թաղ. խորհրդոյ անդամոց ծախքով գաւառէն դաշ մը բրեր են :

Սոյն Հայազգի գերիները ամեն կիրակի եկեղեցի յաճախելու արտօնութիւն ստացեր են :

—Եւրոպայի Ձենկիլէր գիւղի թաղ. խորհուրդը յաղագային Պատրիարքարան ուղղեալ նամակաւ մը Ձենկիլէրի մէջ Ձէրքէղաց գործած անկարգութիւնները , Հայ մը սպաննելը և ուրիշ մը մահու չափ վիրաւորելը յայտնելով , գիւղը ապագայ վտանգէ ազատելու համար ազգ. Պատրիարքարանի անօրէնութիւնը նոյնքա՞ծ էր :

Ս. Պատրիարք Հայրը անմիջապէս թագրիր գրեց առ Բ. Դուռն : Հայրենի :

Մահա լրագրոյն ամսոյս 7 թուոյն մէջ զհետեւեալն ընթերցուեց :

Փափաղեան Ստեփան Էֆէնտին՝ Պատր. Փոխգեր. Տ. Յ. Մկրեանի դէմ յարուցած ամբաստանութեանց իւր կողմանէ խօստարեան Օղսէն Էֆէնտին փոխանորդ կարգած ըլլալով , կը խնդրէ թէ յանձնարուեմք պատասխանելու է թէ այսպիսի դատերու համար փոխանորդութիւն չընդունուիր :

Քննիչ յանձնախումբին այս պատասխանը խիստ օրինաւոր կը գտնենք :

Փափաղեան Ստեփան Էֆէնտին պէտք է անձամբ ապացուցանէ իւր բրած ամբաստանութիւններն ինչպէս որ խօսք տուած է հրապարակաւ : Ասկէց զատ՝ ամեն մարդ գիտէ որ փափաղեան Էֆէնտին գտն անձամբ վարելու խիստ կարող է և փոխանորդի կամ փաստաբանի բնաւ կարօտութիւն չունի :

— Բուժէլի երկաթուղեաց արտօնաւոր Պարոն Հիւր՝ Բուժէլիէն մայրաքաղաքս փախչող 70 հայ գաղթականաց համար 70 անկողին , 70 վերմակ , 70 խըրդա և 200 շոյգ գուլպա Պատրիարքարան զրկած ըլլալով՝ ուրեալ օրն յիշեալ գաղթականաց բախտեցան , և Պատրիարքարանը շնորհակալութեան գիր մը գրեց առատաձեռն բարեբարին :

Քաղաքիս Աղքատասիրաց Ընկերութիւնն Հայոց , որ 'ի հիմնադրութեան իւրմէ մինչև ցայսօր յաջողեցաւ 'ի ձեռս բերել զհամակրութիւնս և զքաջակրութիւնս ազգայնոց և օտարաց , Աղքատասիրաց Ընկերութիւնն , կ'ըսեմք , որոչեալ է պարահանդէս մի տալ 'ի նպատաւ աղքատաց և կարօտելոյ 'ի ջնն ամսոյս երեքշաբթի երեկոյն : Ուստի տարակոյս չունիմք թէ մարդասէր և ազգասէր քաղաքակիցք մեր պիտի փութան իրենց ներկայութեամբ՝ գործակից լինել յիշեալ Ընկերութեան այս Աստուածահաճոյ նպատակին , որ է օգնել աղքատաց : Մտից տոմսակին գինն՝ մի օսմանեան լիւ ա է :

ՔԱՆԱՔԱՆ ԼՈՒՐԻՔ

Զմիռնիա, 18 Փետրվար:

Մեր քննչ հանուր նոր կառավարիչ վսեմ համարի փառանք, ըստ սովորութեան քաղաքիս հիւպատոսաց պաշտօնական այցելութիւններն ընդունելով, փոխադարձ այցելութեան գնաց և իւր բարձր աստիճանին վերաբերեալ յարգանք ընդունեցաւ 'ի նոցանէ:

Նորին Բարձրութիւնն փութացաւ նաև այցելութեան երթալ Ամբրիկայի Միացեալ Նահանգաց հասարակապետութեան նախորդ գահերէց կրէնթ զօրավարին, 'ի «Վանտալիա» անուն պատերազմական շոգեշարժ նաւն որով եկած էր 'ի քաղաք մեր:

Ամսոյս 13ին երկուշաբթի օրն՝ յիշեալ բարձրաստիճան զօրապետն փոխադարձ այցելութեան երթալով մեր բարձրա կուսակալին, բազում մեծարանք և զինուորական փառաւորութեամբ ընդունուեցաւ:

Կրէնթ զօրապետն զկնի պտըտելոյ զաւերական Եփեսոսի և զՏաւթիւնս քաղաքիս, չորեքշաբթի օրն մեկնեցաւ 'ի կոստանդնուպօլիս երթալու «Վանտալիա» շոգենաւով:

—Հռոմի մէջ կարտինալաց ժողովն՝ ըստ եկեղեցական կարգադրութեանց՝ գումարուելով և երկու օր խորհրդակցելէ ետեւ՝ ընտրեցին բոլոր յայտնի երջանակայիշատակ Պիոս իններորդին, այսինքն գնոր Պապն, որ կոչեցաւ Լէոն Ժ.:

—Չորեքշաբթի օրն 'ի լատինական մայր եկեղեցին քաղաքիս հանդիսաւոր պատարագ մատուցաւ և մեծաշուք պաշտօն եղև վասն հանգստեան հոգւոյ Պիոսի իններորդի: Խուռն բազմութիւն հաւատացեցող ներկայ գտնուեցաւ այս եկեղեցական մեծ հանդիսին, յորում զուրբ պատարագն մտողց մոնսէյնէօր Սբաքքաբէէզըրա գերաւ Արքեպիսկոպոսն Զմիռնոյ:

—Թէև ժամանակէ մը 'ի վեր գաղութիւնք և յափշտակութիւնք անպակաս են 'ի քաղաքիս, այսու ամենայնիւ լիայոյս եմք թէ մեր նոր վարիին մարդասիրական լուրջ խնամքն հասարակաց ապահովութիւնն նոր և յաջող կերպարան մի պիտի ընդունի: մանաւանդ որ Նորին Բարձրութեան բարեգութ անօրէնութեամբն հարկւր պահապան զինուոր յաւելցաւ Ոստիկանութեան զինուորաց թուոյն վերայ:

—Ի նաւահանգիստն քաղաքիս դտանին այժմ 13 պատերազմական նաւք: այսինքն 4 շոգեղիական, 3 աւստրիական, 3 ամբրիկացի, 2 գերմանական և 1 իտալական:

—Մատրիտէն հասեալ հեռագիր մի կըմանուցանէ թէ Աֆրիքա կողմած Սպանիական ֆրեկաթին հրաման տրուեցաւ որ ուղևորի 'ի Միլիթրական ծովն 'ի պաշտպանութիւն Սպանիոյ հարստակաց 'ի թուրքիա բնակելոց:

—Յայտնի է թէ Պերլինի Օսմանեան դեսպան Սաստուլլաճ պէյն, երկրորդ լիազօր դեսպան կարգուելով վասն բանախօսութեանց հաշտութեան, մեկնեցաւ 'ի նոյն մայրաքաղաքէն:

Յիշեալ դեսպանատան խորհրդայ առաջին քորատուղար հայկաղուն Օհան էֆէնաին՝ գործակատորի և փոխանորդի պաշտօն պիտի վարէ ցորչափ ժամանակ որ Սաստուլլաճ պէյն բացակայ պիտի գտնուի 'ի Պերլինէ:

—Ռուսաց բանակակեցորդն 'ի Պոլսոյ յաւակից Ալի—Սթեֆանօ զիւղն փոխադրուելէ յառաջ վսեմ տեսար Ստեփան փաշան և Նուրեան էֆէնաին 'ի կողմանէ «Կարմիր մահիկի» ընկերութեան յԱգրիանուպօլիս գնացին Ռուսական իշխանութեանց հետ բանակցելու համար 'ի մոսկն փոխադրութեան 'ի Կ. Պօլիս՝ 650ի չափ հիւանդ և վերաւոր զինուորացի որք Յիլիպէի և Սոֆիայի մէջ կը դառնուին:

—Դարնանային արեւափայլ օդն կըտիրէ 'ի մի քանի աւուրց հետէ և խուռն բազմութիւն պտըտողաց յերկուց սեռից անպակաս է 'ի նորաշէն գեղեցիկ ծովեզերս քաղաքիս, որ մէսիէօ Տիւսօ Ֆրէր հռչակաւոր ճարտարապետաց հոյակապ և ճարտարարուեստ գործն է:

Հասարակութիւնն՝ բարեխնամ շնորհիւ մեր վսեմ կուսակալին, կատարեալ անգործութեան

մէջ լինելով, սովորական զրօտանօք բարեկենդանք կ'ընէ, դիմակաւոր կըպտըտի, ու կըզուարճանայ երեկոյթներով (soirée) և պարահանդէսներով: որոց մի քանին 'ի նպատակ աղքատաց և կարօտելոց կըտրուի:

—Պաշտատի նոր կուսակալ վսեմ Գաթրի փաշան ամսոյս 10ին աւստրիական շոգենաւով հասաւ 'ի քաղաք մեր, ուր մի քանի ժամ մնալէ ետեւ շարունակեց զճանապարհորդութիւնն 'ի պաշտօնատեղին իւր երթալու:

—Կ. Պօլսոյ «Հայրենիք» լրագրոյն ամսոյս 7 թուոյն մէջ զհետեւեալն ընթեռնուեց:

«Ժուռնալ Տը Պրիւքսէլի Ս. Բէզէրսպուրկի թղթակիցը կըսէ թէ՝ գրեթէ ստոյգ է որ Ռուսական պայմաններէն մէկն ալ Պօլսոյ Ալի—Սթեֆիայի մղկիթը յունական եկեղեցւոյ պաշտաման վերածելն եղած է: Ռուսական բանակին յաղթանակը շատ ցաւալի արդիւնք մը պիտի ունենայ Ռուսաց Պատրիարքին համար, որ 'ի շնորհս Սուլթանին կոնդակներ հրատարակած է»:

—Կ. Պօլսոյ «Լրագիր» թերթին փետրվարի 7 թիւն զհետեւեալ տողերն կըպարունակէ:

«Օսմանեան երեսփոխանաց ոմանց դէմ ոստիկանութեան վերատեսչութեան ձեռք առած հետեւեալ միջոցը ախուր տպաւորութիւն մ'ըրաւ հասարակոց կարծեաց վրայ:

«Ոստիկանութեան վերատեսչ Օսման փաշա այս երկուշաբթի օր ոստիկանութեան դուռը կըհրաւիրէ հետեւեալ երեսփոխաններն, որք են, Երուսաղէմացի Եուսուֆ Ջիա էֆէնաին, Հայէպցի Նաֆի և Մանուկ էֆէնաին, Պէրութցի Ապարիւրահիմ և Խալիլ Կանէմ էֆէն. Զմիռնացի Եէնիէհէրիզատէ հաճի Ահմէտ և Մէնէքէլի էմին էֆ. Սէլանիկցի Մուսթաֆա—Պէյ, Եաննայի Մուսթաֆա—Պէյ և Էտրնեցի Իսաիմ—Պէյ, վերջապէս բոլոր ձախակողմեան անդամներն: Վսեմ վերատեսչը պատուէր կը տայ իրենց թէ խորհրդարանին նիստերը դոցուած ըլլալուն վրայ, բարձրագոյն հրամանաւ այլ ևս հոս իրենց ներկայութեանը հարկ չմնալով, կըպարտաւորին անյապաղ՝ իւրաքանչիւրն իւր տեղը դառնալ բաց 'ի Բասթա—Պէյին, որնոր Պրուսայի մէջ բանտարկուելու պիտի զրկուի»:

—Կ. Պօլսոյ լրագիրը կըմանուցանեն թէ՝ ըստ հրաւիրանոց օգոստ Սուլթանին, բարձրա Նիքոլայ Մեծ—Դուքսն այցելութիւն մի պիտի ընէ 'ի Կ. Պօլիս՝ հաշտութեան դաշնագիրն ստորագրուելէ ետեւ: Յետ այնորիկ Ալի—Սթեֆանօյի և Տէտէաղաճի մէջ տեղ բանակեալ Ռուսաց զօրն պիտի վերադառնան 'ի Ռուսիա՝ Օտտոման ճանապարհաւ, և 'ի նաւ պիտի մանեն 'ի Տէտէաղաճ:

—Կըսուի թէ՝ օգոստ Ուոլմանն 'ի նշան իւր կայսերական գահունակութեան, ոսկի երախակալով (գապլէ) փառաւոր սուր մի ընծայեր է վսեմ Նամըք փաշային:

—Կըսեմք թէ վսեմ Գաթրի—Պէյն, որ վառնայի կառավարիչ էր, կայսերական հրամանագրով օսման դեսպան կարգուել է 'ի Թէհրան:

—Ամսոյս 11ին հրատարակեալ Կ. Պօլսոյ փունջ լրագիրն զհետեւեալն պարունակէ:

«Պատրէթ երկի 'ի լրոյ ծանուցած էր թէ Նիքոլայ Մեծ—Դուքսն մտադիր է եղեր Պօլիս գալ և օգոստ Սուլթանին հետ տեսնուիլ»:

—«Պատրիարքարանէն

... Խմբագիր,

«Լրագիր» թերթին իւր երէկուան 610 թուով լուր մը հրատարակած է, իբր թէ վեհա կաթողիկոսէն գիր մ'եկած է առ ամենապատիւ որբաղան Պատրիարք Հայրն հրաւիրելու զինքը 'ի Ելմիսթին քաղաքական այցելութեան մը համար, և այլն, և այլն:

Ըստ հրամանի ամենա սրբազան Հօր կըփութամ ներկայիւս յայտարարել, թէ այդպիսի գիր մը ոչ եկած է և ոչ Լրագրին տուած վերոյիշեալ լուրն տեղի ունի երբէք:

10 Փետրվար 1878 Դիւանապետ Պատրիարքարան Հայոց Թալատ:

Կոստանդնուպօլիս:

—Ի Կ. Պօլսոյ երէկուանէ արձակեալ հեռագիր մի կըմանուցանէ թէ հինգշաբթի օրն 'ի կայսերական պալատն եղեալ արտաքոյ կարգի

խորհրդոյն մէջ ընդունուել են պայմանքն հաշտութեան, հետեւաբար դաշնագրութիւնն այսօր՝ որ է շաբաթ, պիտի ստորագրուի:

—Պաշտօնական յայտարարութիւնք, որ Կ. Պօլսոյ գլխաւոր փողոցաց պատերուն վերայ կայցուած են, կըմանուցանեն յիշեալ մայրաքաղաքին բնակչաց զգալուստն Ռուսաց յորդորելով զնոսա շխուպիլ և չվանալ 'ի ներկայութեան նոցա 'ի գիւղն Ալի—Սթեֆանօ:

—Ի Կ. Պօլսոյ հասեալ երէկուան տւարիական շոգենաւով 1400ի չափ գաղթական և կամաւոր զինուորք հասին 'ի քաղաքս, նմանապէս մի քանի հիւանդ զինուորականք:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակէն բաւական վաճառմունք եղեն յայսմ շաբաթու, բայց գիններն թոյլ են միշտ: Ընդամենը 1400 հակ վաճառեցան, յորոց 800ն մեքենայով մաքրուած 'ի գին 335—345 ղուրուչից առ կենդինարն և 600ն Ատանայի բամպակ 335ի:

Աֆիօնէն անցեալ և այս շաբաթու շուրջ 160 կողով վաճառեցաւ 130 ղուրուչով առ չէքին: Այս գինն հաստատուն է և գնողք անպակաս են: սակայն աֆիօն ունեցող բաղում վաճառականք չեն կամիր այժմ վաճառել յուսալով թէ յետ սակաւուց պիտի բարձրանայ: զի կըհաւատեն թէ առաջիկայ հունձն փոստեալէ:

Փալամուսն թէև քիչ մը թոյլ է, բայց և այնպէս գրեթէ 3000 կենդինար վաճառեցաւ Նաթիլէ կոչուած տեսակէն 107—120 ղուրուչով առ կենդինարն:

ԾԱՆՈԹՈՒՄ

Գործարան Դիախոտի Բ. Տ. Խրիսթոսոյ և Ընկերութեան:

Վերոյիշեալ գործարանի վերատեսչութիւնը պատիւ ունի ծանուցանելու ծխախոտ վաճառողաց եւ մեծա ծխողաց, թէ բանի մը օրէ փ վեր բացուած գործարան մի, աւ բարեքներու եւ մարքաներու եւ մանաւանդ վերոյիշեալ Բ. Տ. Խրիսթոսոյ և Ընկերութեան յատուկ նշաններու նմանողութեամբ ծխախոտի բարեքներ հանած ըլլալով, այս նմանողութեան գոյաւան եւ բարեքներու մակագիրը ուշադրութեամբ կարգան:

2

ԽՈՐՀՐԳԱՌՈՐ ԿԳՁԻ, ԿԳՁԻՈՅՆ ԴԱԳՏՆԻՔԸ

Ժիւլ Վերն գաղղիացի հեղինակին հետաքրքրական գեղեցիկ մէկ աշխատասիրութիւնն է. գոր պարոն Մ. Մամուրեան պատուելիմ բարգմանեալ է 'ի հայերէն աշխարհի բարբառ:

Այս գործոյն բարգմանութեան երրորդ հատորն՝ որ բաղկացեալ է յոթածալ 232 էրեսաց, արդեն 'ի լոյս ընծայեալ լինելով 'ի տպարանի Տիտեան Եղբայր, կըվաճառի անդ 'ի գին 2 Ֆրանքաց:

2

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթը անգամ մը՝ շաբաթ օրը կըհրատարակուի: Տարեկան գինը 120 ղուրուչ է ողջ ղրամով, կանխիկ վճարելի: Գուրս երթալու լրագրոց ճանապարհի ծախքը՝ առնողն վերայ է: Ո՛վ որ կուզէ, կրնայ բաժանորդ գրուիլ Զմիռնիս՝ Արշալոյսոյ զրաւունք: Իսկ ուրիշ քաղաքացի համար, ահա կընշանակիք լրագրոյս մեծարդոյ գործակալաց անուանը, որք են:

Կոստանդնուպօլիս՝ Հ. Ս. Աւաճաճեան էֆէնաին, Տիւրք և Տէր Փաւնց լրագրոյն:

Աղբաւորիկա՝ աղա Միքտիչ Հալէպլեան:

Գոհիլի՝ Խոկնեղէր աղա Մեղիքեան:

Յոպպէ՝ աղա Սիմօն Ս. Մուրատեան, փոխ—հիւպատոս Գերմանիոյ:

Բէզէրսպուրկ՝ Խաչատուր սարկաւազ Խանթարճեան

Մոսկուա՝ պարոն Չարմայր Մսերեան:

Հալէպ՝ Տ. Խաչաի քահանայ Դանիէլիքեան:

Կաթիլթա՝ պարոն Մ. Խ. Յովակիմեան:

Մատրաս՝ պարոն Սիդորէոս Սամ:

Պալատիս՝ պարոն Մանուկ Որդանանեան:

Խմբագիր—տէր լրագրոյս,

Գ. Լ. Կ. Պալատիս:

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ